


ք. Երևան

03.06.2021թ.


Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 33/14.3/10940-2021, ՀՀ շրջակա միջավայրի 2/02.5/7359-2021, ՀՀ էկոնոմիկայի 01/7431-2021 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի և ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչությունների, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.1/4793-2021 և Կադաստրի կոմիտեի ԱԳ/4069-2021 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ **ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Հաղպատ բնակավայրի** հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Ալավերդի համայնքի վարչական սահմաններում գտնվող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 06-060-0220-0042 ծածկագրի 0.0102 հա, 06-060-0218-0058 ծածկագրի 0.00942 հա, 06-060-0215-0021 ծածկագրի 0.01032 հա, 06-060-0220-0044 ծածկագրի 0.00086 հա և 06-060-0218-0060 ծածկագրի 0.01021 հա հողամասերը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության՝ էներգետիկայի հողերի գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ. Տերտերյան

քարտուղար՝



Մ. Մկրտչյան